ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/56 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների (ՀՀ Կոտայքի մարզի Բջնի գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսային ավանդատան արտաքին պատի վերականգնման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 15.09.2022թ. ժամը 16:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաճողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/56 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/56 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ	ametisllc@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	317471	317000	317000

5. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 **«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում.

5.1.1 Առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝

- Բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվող ծառայություններում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետներիի անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:
- Հայտով ներկայացված չէ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

5.1.2 Հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարությունում նշված է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի սխալ հղում: Անհրաժեշտ է լրացնել ճիշտ հղումը կամ դրա բացակայության դեպքում՝ «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը փոխարինել «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով:
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում լրացված չեն մասնագետների կողմից վերջին 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ առնվազն մեկ ծառայությունը կամ աշխատանքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակիցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2022թ սեպտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.09.2022թ. ժամը 11:00-ին

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

7.1 Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից 5.1-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման և միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին.

8.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և ընթացակարգի բոլոր մասնակիցներին հրավիրել ներկայացված գների նվազեցման շուրջ բանակցությունների ս.թ 2022թ սեպտեմբերի 22-ին, ժամը 10:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.09.2022թ. ժամը 10:00-ին

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

Բացակայում է «ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

9. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.

9.1 «ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով, վերջինիս հայտով ներկայացված գնային առաջարկները թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

10.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչել **«ԱՄԵՏԻՍ» ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

11. Գնահատման արդյունքների մասին.

11.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Հովսեփյան /նախագահ/

_____ Լուսինե Իգիթյան

_____ Սուրեն Շաքարյան

_____ Արմինե Ստեփանյան

_____ Վերգինե Սահակյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/